ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 44-Ա/2 «22» հունվարի 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՈՐՈՇ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2020 թվականի բյուջեի կատարումն ապահովելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2020 թվականի բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումներին՝ սույն հրամանի հավելվածով հաստատված ցանկին համապատասխան իրականացնել Նախարարության 2020 թվականի բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Նախարարության գլխավոր քարտուղար Նաիրի Հարությունյանին:

22.01.2020

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378 Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2020թ. հունվարի 22-ի N 44-Ա/2 հրամանի

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ույ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

հ/հ	**Կատարողները**	**Կատարման ենթակա աշխատանքները և միջոցառումները**	**Աշխատանքների և միջոցառումների կատարման սահմանային ժամկետները**
1	2	3	5
1.	ՀՀ Գիտության կոմիտե	Հաստատել, նախարարության պաշտոնական վեբկայքում հրապարակել և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել 2020թ. պետական բյուջեի «1162. Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի» «11007. Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում» միջոցառման գծով նախատեսված հատկացումների բաշխումը՝ ըստ առանձին հրատարակումների	մինչև 2020թ. մարտի 5-ը
2.	Նախարարության հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները. - Ֆինանսաբյուջետային վարչություն - Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն	Հաստատել (ֆինանսաբյուջետային վարչություն), նախարարության պաշտոնական վեբկայքում հրապարակել (հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն) և ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնել (ֆինանսաբյուջետային վարչություն) 2020թ. պետական բյուջեի «1146. Հանրակրթության ծրագրի» «11016. Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում» միջոցառման գծով նախատեսված հատկացումների բաշխումը	մինչև 2020թ. մարտի 27-ը
3.	Նախարարության հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները. - Երիտասարդական քաղաքականության վարչություն	Հաստատել, նախարարության պաշտոնական վեբկայքում հրապարակել (հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն) և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել 2020թ. պետական բյուջեի «1115. Երիտասարդական ծրագրի» գծով (երիտասարդական քաղաքականության վարչություն)	մինչև 2020թ. փետրվարի 5-ը

	- Ժամանակակից արվեստի վարչություն - Մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչություն - Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն	նախատեսված հատկացումների բաշխումը, ըստ առանձին միջոցառումների, «1124. Գրքի և գրչության ծրագրի» «11001. Գրքերի ձեռքբերում» միջոցառման (մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչություն) և «1198. Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագրի» «11002. Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում» միջոցառման (ժամանակակից արվեստի վարչություն) հատկացումների բաշխումը, ըստ առանձին հրատարակումների	
4.	Նախարարության Ժամանակակից արվեստի վարչություն	ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել 2020թ. պետական բյուջեի «1056. Կինեմատոգրաֆիայի ծրագրի» «11001. Կինոնկարների արտադրություն» միջոցառման, «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման ծախսերի նախահաշիվները, իսկ նպաստների տրամադրման մասով՝ նպաստների հատկացման կարգը	մինչև 2020թ. մարտի 27-ը
5.	Նախարարության Մարզական կազմակերպությունների և մանկապատանեկան սպորտի քաղաքականության վարչություն	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել 2020թ. պետական բյուջեի «1041. Մեծ նվաճումների սպորտ» ծրագրի «12003. Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին անվանական թոշակի հատկացում» միջոցառման շրջանակներում բարձր արդյունքների հասած՝ ՀՀ հավաքական թիմերի մարզիկների և նրանց մարզիչների 2020 թվականի ցուցակը	մինչև 2020թ. փետրվարի 5-ը
6.	Նախարարության հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները. - Գնումների և հաշվապահական հաշվառման վարչություն - Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն	Հաստատել (գնումների և հաշվապահական հաշվառման վարչություն), նախարարության պաշտոնական վեբկայքում հրապարակել (հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն) համակարգում գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակները, պաշտոնային դրույքաչափերը, խրախուսմանն ուղղվող միջոցների չափաքանակները, ինչպես նաև կազմակերպությունների կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների քանակները	գնումների և հաշվապահական հաշվառման վարչություն՝ մինչև 2020թ. մարտի 25-ը հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն՝ մինչև 2020թ. մարտի 27-ը
7.	Նախարարության հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները. - Գնումների և հաշվապահական հաշվառման վարչություն - Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն	Հաստատել (գնումների և հաշվապահական հաշվառման վարչություն), նախարարության պաշտոնական վեբկայքում հրապարակել (հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել պետության հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների և պետության կողմից ստեղծված հիմնադրամների աշխատողների քանակները, պաշտոնային դրույքաչափերը, խրախուսմանն ուղղվող միջոցների չափաքանակները,	գնումների և հաշվապահական հաշվառման վարչություն՝ մինչև 2020թ. մարտի 25-ը հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն՝ մինչև 2020թ. մարտի 27-ը

		ինչպես նաև կազմակերպությունների կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների քանակները: Միանման գործունեություն ծավալող կազմակերպությունների մասով հրապարակման ենթակա է օրինակելի ձևը:	